ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի

12.11.2018թ. արձանագրությամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ
Դիտորդ խորհրդի նախագահ
Ա. Չիտչյան _____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Ընդհանուր ժողովի

22.12.2018թ. որոշմամբ

«ՍԳԿԿ» ԻԿԿ նախագահ
Ա. Չիտչյան _____

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ և ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԿԱՐԳ /փոփոխված/

Հայաստանի Հանրապետություն
քաղաք Երևան

2018թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), ՀՀ օրենսդրությանը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքին, Կազմակերպության կանոնադրությանը և ներքին իրավական փաստաթղթերին համապատասխան, սահմանում է «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) Կարգապահական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) գործունեության ընթացակարգը, սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգն ու ժամկետները, ինչպես նաև կարգապահական վարույթի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

1.2.Հանձնաժողովը չի հանդիսանում «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կառավարման մարմին:

1.3.Հանձնաժողովի անդամները իրենց գործառույթները իրականացնելիս քննարկում են այնպիսի խախտումներն ու չարաշահումները, որոնց արդյունքում սնանկության գործով կառավարչի կողմից չեն պահպանվել ՀՀ օրենսդրությամբ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով, Կազմակերպության կանոնադրությամբ, Վարքագծի կանոնագրքով և Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերով սահմանված պահանջները:

1.4.Հանձնաժողովը սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցում է պետական և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց գրավոր դիմումների, բողոքների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

1.5.Կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթն իրականացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործողությունները իրականացվում են Օրենքի և Կազմակերպության առջև՝ կառավարիչների հավասարության սկզբունքի հիման վրա:

1.6.Կառավարիչներին կարգապահական տույժի ենթարկելիս Դիտորդ խորհուրդը պարտավոր է ղեկավարվել միատեսակ չափանիշներով:

1.7.Կարգապահական վարույթն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի հիման վրա:

1.8.Կարգապահական խախտման կատարման մեջ կասկածվող կառավարիչը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Օրենքին և Կանոնագրքին համապատասխան ընդունված Դիտորդ խորհրդի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ:

2.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

2.1.Հանձնաժողովը «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի մասնագիտացված մարմիններից է, որը ՀՀ օրենսդրության, Կազմակերպության կանոնադրության, Վարքագծի կանոնագրքի և սույն Կարգի դրույթների համապատասխան հարուցում է կարգապահական վարույթ և տալիս համապատասխան եզրակացություն՝ կարգապահական տույժեր կիրառելու վերաբերյալ:

2.2.Հանձնաժողովի անդամները ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կարգապահական հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամից և իր գործունեությունն իրականացնում է Ընդհանուր ժողովի կողմից հաստատված սույն Կարգի համաձայն:

2.3.Հանձնաժողովի անդամների ընտրության ժամանակ Կազմակերպության ցանկացած անդամ իրավունք ունի առաջադրել իր կամ Կազմակերպության մեկ այլ անդամի թեկնածությունը:

Առաջադրված թեկնածուն իրավունք ունի ինքնաբացարկ հայտնել:

2.4.Հանձնաժողովի կազմում կարող է տեղի ունենալ անդամների փոփոխություն: Հանձնաժողովի անդամը կարող է հեռացվել հանձնաժողովի կազմից կամ կամավոր դուրս գալ իր գրավոր դիմումի համաձայն: Հանձնաժողովի անդամների կազմում փոփոխության հարցը քննարկվում է Դիտորդ խորհրդի նիստի ժամանակ և կայացվում է որոշում՝ նոր անդամի թեկնածության հաստատման վերաբերյալ:

2.5.Հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի անդամների կողմից, բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

2.6.Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

2.7.Հանձնաժողովի նիստերի քարտուղարը Հանձնաժողովի անդամ չի հանդիսանում և նշանակվում է Հանձնաժողովի նախագահի կողմից:

2.8.Քարտուղարը Հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ փոստային ծառայության, էլեկտրոնային նամակի կամ կապի այլ միջոցներով Հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է կարգապահական վարույթի նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

2.9.Քարտուղարը Հանձնաժողովի նիստից առնվազն տաս օր առաջ փոստային ծառայության, էլեկտրոնային նամակի կամ կապի այլ միջոցներով ծանուցում է դիմումատուին և սնանկության գործով կառավարչին կարգապահական վարույթի նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Կարգապահական վարույթի կողմեր են հանդիսանում՝ կարգապահական վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած բողոքը ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը և կառավարիչը, ում գործողությունների վերաբերյալ ներկայացվել է բողոքը:

Կարգապահական վարույթի շրջանակներում որոշակի փաստեր հաստատելու կամ հերքելու նպատակով կարող են հրավիրվել նաև վկաներ, ինչպես կողմերի, այնպես էլ Կարգապահական հանձնաժողովի կամ Դիտորդ խորհրդի կողմից:

3.2.Կողմերը սույն Կարգի համաձայն վարույթներն իրականացնելիս հավասար իրավունքներ ունեն՝

- մասնակցելու կարգապահական վարույթի բոլոր փուլերին ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով,
- կարգապահական վարույթի հարուցման պահից ծանոթանալու կարգապահական գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանելու և վարույթից դուրս գրելու ցանկացած ծավալի որևէ տեղեկություն,
- տալու բացատրություններ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց,

- ներկայացնելու ապացույցներ կարգապահական գործին կցելու և հետազոտելու համար,
- հրավիրելու վկաներ, հարցեր տալու ինչպես իր, այնպես էլ մյուս կողմի կամ Դիտորդ խորհրդի կողմից հրավիրած վկաներին,
- հարցեր տալու ելույթ ունեցողին,
- ստանալու Դիտորդ խորհրդի որոշումները,
- դատական կարգով բողոքարկելու Դիտորդ խորհրդի որոշումները:

3.3.Կարգապահական վարույթի ընթացքում կողմերը պարտավոր են՝

- զերծ մնալ միմյանց նկատմամբ պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող արտահայտություններ անելուց կամ գործողություններ կատարելուց,
- հարգալից վերաբերվել միմյանց, ինչպես նաև՝ Դիտորդ խորհրդի անդամների և նախագահի նկատմամբ,
- Դիտորդ խորհրդի նիստերին ներկա գտնվելու ընթացքում, պահպանել կարգ ու կանոն, ենթարկվել նիստը նախագահողի օրինական կարգադրություններին:

3.4.Կառավարիչը, ում նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ պարտավոր է՝

- Հանձնաժողովի պահանջով ներկայացնել գրավոր բացատրություններ,
- Հաձնաժողովի եզրակացությունը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում Դիտորդ խորհրդին ներկայացնել գրավոր առարկություններ, եթե ամբողջովին կամ մասամբ համաձայն չէ Հանձնաժողովի եզրակացության հետ,
- Առարկությունների մեջ կառավարիչը պարտավոր է նշել իր փաստարկները Հանձնաժողովի եզրակացության մեջ տեղ գտած փաստերի և ապացույցների գնահատականի վերաբերյալ:
- Սույն կետով սահմանված ժամկետում գրավոր առարկություններ չներկայացնելը Դիտորդ խորհուրդը կարող է որակել որպես կառավարչի կողմից Հանձնաժողովի եզրակացության ընդունում:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

4.1.Հանձնաժողովի նիստերը բացում և անցկացնում է Հանձնաժողովի նախագահը: Նիստից առաջ Հանձնաժողովի քարտուղարը արձանագրում է Հանձնաժողովի անդամների ներկայության կամ բացակայության փաստը:

4.2.Հանձնաժողովը իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամներից առնվազն երեքը:

4.3.Քարտուղարը վարում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

4.4.Հանձնաժողովի նիստին հրավիրվում են սնանկության գործով այն կառավարիչը, որի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, ինչպես նաև բողոք ներկայացնող անձը:

Հանձնաժողովի նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված սնանկության գործով կառավարչի և/կամ այլ անձանց բացակայությունը արգելք չէ կառավարչի նկատմամբ հարուցված կարգապահական խախտման քննարկման համար:

4.5.Հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը ստուգում է նիստին մասնակցող մասնակիցների և սնանկության գործով կառավարչի ներկայությունը, ինչպես նաև կառավարչի ներկայացուցիչների լիազորությունները:

4.6.Հանձնաժողովի նախագահը ներկայացնում է հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն, այնուհետև խոսքը տրվում է այն անձին կամ նրա ներկայացուցչին, որը բողոք է ներկայացրել սնանկության գործով կառավարչի դեմ: Դրանից հետո կառավարիչը կամ նրա ներկայացուցիչը իրավասու են ներկայացնել իրենց գործողությունների կամ անգործության օրինականությունը հիմնավորող փաստարկներ:

4.7.Հանձնաժողովի անդամները իրավասու են հարցեր տալ կարգապահական վարույթի մասնակիցներին:

4.8.Հանձնաժողովի եզրակացությունները կազմվում են Հանձնաժողովի նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.9.Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթը պետք է ավարտվի և կարգապահական գործը՝ եզրակացության հետ միասին Դիտորդ խորհրդին ուղարկվի

ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան վարույթը հարուցելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

4.10.Հանձնաժողովի եզրակացությունները Հանձնաժողովի նախագահը՝ նիստի հաջորդ օրը ներկայացնում է Դիտորդ խորհրդի նախագահին, և վերջինս Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով հարցը ներկայացնում է Դիտորդ խորհրդի քննարկմանը:

4.11.Կարգապահական վարույթի արդյունքում կազմված եզրակացությունը սահմանված ժամկետում Հանձնաժողովի կողմից Դիտորդ խորհրդին չներկայացնելու դեպքում կարգապահական վարույթը համարում է կարճված:

4.12.Կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

4.13.Սույն կարգին համապատասխան կարգապահական վարույթի կասեցման դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է:

5. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1.Կազմակերպության անդամի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Հանձնաժողովը Դիտորդ խորհրդին ներկայացնում է հիմնավորված եզրակացություն՝

- կարգապահական վարույթը կարճելու մասին,
- հայտնաբերված կարգապահական խախտումը վերացնելու համար ժամկետ սահմանելու մասին,
- բանավոր նկատողություն տալու մասին,
- հրապարակային նկատողություն տալու մասին,
- բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ նախազգուշացման մասին,
- կարգապահական տույժի սահմանման մասին,
- դրամական տույժի սահմանման մասին,

- անդամակցության դադարեցման վերաբերյալ:

5.2.Դրամական տույժի սահմանման մասին եզրակացություն ընդունելու դեպքում նշված տույժի վերջնական չափը որոշում է Դիտորդ խորհուրդը, որի չափը պետք է կազմի ոչ պակաս քան 50.000 ՀՀ դրամը և ոչ ավել, քան 200.000 ՀՀ դրամը:

5.3.Կազմակերպության անդամը դրամական տույժի է ենթարվում հետևյալ դեպքերում՝

- սնանկության վարույթը և իր պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելու դեպքում,
- Կազմակերպության ղեկավարությանը ոչ ճշգրիտ և ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու դեպքում,
- Կազմակերպության ղեկավարությանը պարբերական կարգով ոչ պատշաճ տեղեկատվության կամ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում,
- Կազմակերպության ներքին փաստաթղթերով սահմանված կարգով հաշվետվությունները ժամանակին չներկայացնելու դեպքում:

5.4.Հանձնաժողովի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ եզրակացությունը եռօրյա ժամկետում հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվում է դիմում ներկայացրած անձանց և խախտում կատարած սնանկության գործով կառավարչին:

5.5.Հարուցված կարգապահական վարույթների նիստերի ընթացքում քարտուղարի կողմից կազմվում է արձանագրություն, որը դասվում է Կազմակերպության ներքին իրավական փաստաթղթերի շարքին և պահպանվում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Դիմումատուն, ինչպես նաև Կազմակերպության այն անդամը, որի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, իրավասու են պաշտոնական հարցման միջոցով պահանջելու Հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

6. ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

6.1.Մեկ կարգապահական վարույթի քննության շրջանակում, անգամ եթե նույն կառավարիչը կատարել է մի քանի կարգապահական խախտում, Դիտորդ խորհուրդը կայացնում է մեկ որոշում:

6.2.Դիտորդ խորհուրդը որոշումը կայացնում է խորհրդակցական սենյակում: Խորհրդակցական սենյակում կարող են ներկա լինել միայն տվյալ գործը քննող խորհրդի կազմում ընդգրկված անդամները: Այլ անձանց ներկայությունը չի թույլատրվում:

6.3.Խորհրդակցական սենյակում որոշումն ընդունվում է Դիտորդ խորհրդի անդամների բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն ավելի բարենպաստ է կառավարչի համար:

6.4.Դիտորդ խորհրդի կողմից խորհրդակցական սենյակում քննարկված հարցերը, խորհրդի անդամների արտահայտած դիրքորոշումը և քվեարկության արդյունքները հրապարակման ենթակա չեն ինչպես նիստի ընթացքում, այնպես էլ գործով քննությունն ավարտվելուց հետո:

6.5.Կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությունից հետո Դիտորդ խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

- կառավարչին կարգապահական տույժի ենթարկելու մասին,
- կարգապահական վարույթը կարճելու մասին:

6.6.Դիտորդ խորհուրդը կարճում է կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝

1) բացակայում է կարգապահական խախտման դեպքը,

2) հիմնավորված չէ կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը,

3) կարգապահական խախտումը կատարելուց հետո կառավարիչը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ,

5) առկա է միևնույն հիմքով և միևնույն դեպքի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթի հարուցումը մերժելու կամ կարգապահական վարույթը կարճելու մասին չվերացված որոշում,

6) անցել են վաղեմության ժամկետները:

6.7.Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն Կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ կառավարչի:

6.8.Որոշումը կազմվում և կողմերին է ուղարկվում հրապարակումից հետո՝ տաս օրվա ընթացքում:

6.9.Դիտորդ խորհրդի որոշումը օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկել դատական կարգով՝ այն ստանալու պահից մեկամսյա ժամկետում:

7.ԴԻՏՈՐԴ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7.1.Կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Դիտորդ խորհրդի որոշումը պետք է պարունակի՝

- Դիտորդ խորհրդի անվանումը և կազմը, կարգապահական գործի համարը,
- Դիտորդ խորհրդում հարցի քննության վայրը և ժամանակը,
- այն կառավարչի անունը, ազգանունը, որի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ,
- Դիմողի բացատրությունները (եթե վարույթը հարուցվել է դիմումի հիման վրա),
- կառավարչի բացատրությունները,
- գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ,
- Դիտորդ խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը:

7.2.Դիտորդ խորհրդի որոշումները հրապարակվում են Կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքում:

7.3.Դիտորդ խորհրդի այն անդամը, ով դեմ է քվեարկել քննարկվող հարցի վերաբերյալ, իրավունք ունի ներկայացնելու գրավոր կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:

7.4.Դիտորդ խորհրդի որոշումը կայացման պահից տասնօրյա ժամկետում ուղարկվում է կողմերին:

8.ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1.Սույն Կարգն ուժի մեջ է մտնում Ընդհանուր ժողովի կողմից հաստատելու պահից:

8.2.Մինչև սույն Կարգի ուժի մեջ մտնելը հարուցված կարգապահական վարույթներն իրականացվում են նախկին ընթացակարգով:

8.3.Սույն Կարգը ապահովում է Սնանկության գործով կառավարչի կանոնագրքի կիրառումը:

8.4.Սույն Կարգը ուժի մեջ մտնելու պահից՝ 16.11.2013թ. Ընդհանուր ժողովի թիվ 1 արձանագրությամբ հաստատված «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» Ինքնակարգավորվող կազմակերպության Կարգապահական վարույթի անցկացման կարգը համարվում է ուժը կորցրած: